



68. ՀԱԹԵՐՔԻՆ ԻՐԵՔ ԴԵՐԸ

Ինիս ա, չինիս, մին շեն անըմը Հաթերք: Էտ շենին ժողովուրթը
էնքան խավար ըն ինիս, վեր ուրանց շենին ըլած-չըլած իրեք դերին
նըհախ տեղան կուտուրես ըն: Դե տես, հո՛ւնց ա ինիս:

Էտ շենացեք ըսես ըն, վեր պերեք տանիք աղ վարինք,
հանցու վեր ամմեն դոնում քինինք վեչ Նախճըվանան չըրչըրվե-
լավ աղ պիրինք: Տընես ըն մին խամ տեղ աղ շաղ տաս, վըրես: Էտ
արտում տեղեն զիղ ա փըսնես: Ըտահանք դյիդաս ըն, թա՛ լըհա
աղը էտ ա: Քյիս ըն տըսնաս էտ տեղեն զիզուն յըրան պըրթպըր-
թոտ ճանջեր ըն նըստալ: Տահանք դյիդաս ըն, թա՛ էտ ճանջերը աղեն
արտը փըչըցնիս ըն: Եր ըն կընաս թորավ-թըրփանգյավ քյիս, թա՛
հանցու վեր ճանջերը կըտորին:

Քյիս ըն, նի տոնաս արտը, կոխ տաս, ճանջերեն թըկես, փըխ-
չըցընես: Բիրդան մին ճանջ քյիս ա մեծ գերեն դոշին վեր կյաս:
Դերըն ուրան ախպորը ծեռքավ իմըցնես ա, վեր թըրփանգյըն յըրա
անե, ճանջեն ըսպանես: Ախպերըն էլ թըրփանգյը թո՛ւշ ա ընես,
ախպորը սըրտան տաս, հանցու վեր ճանջեն ըսպանես, ամմա ուրան
ախպորը՝ մեծ դերին ա ըսպընես:

Էտ պըտըհմունքանը հտը ընցնես ա մին խիլլա՛ վախտ: Եր-
գինքյը թուխպես ա, իրիքյնակը ըրվաս չի՛: Շենացեք մըսլհաթ
ըն ընես, վեր քինին շոռ կյան, իրիքյնակը քըթենան:

Քյիս ըն, շատ շոռ կյաս, խրեգյ շոռ կյաս, ըտ էլ աստուծ ա գյի-

դաս: Մին էլ քյիս ըն մին քըրըտակու յիշիս, տըսնաս, ըտեղ մին պեն
ա պրծըպածի ընես:

Գյիդաս ըն, թա էտ իրիքյնակըն ա:

Պիրիս ըն մաշնակ դերին վըննեբրան փրոնես կլոխը նի քըցիս,
հանցու վեր իրիքյնակը փրոնես, տոնս օնե: Տու մեր ասել, էտ պրծը-
պածե անողը կյոնլոն աշկեր ա: Կյոնլը բոնրդան դերեն կլոխը քը-
ցիս ա ըռեխը: Տոնկյոնսին մարթիքյը վըննեբրան փրոնես ըն, ծիքյ
տաս: Բոնրդան կլոխը պուք ա կյաս: Դերին տոնս ըն օնես, տըսնաս
կլոխը յըրան չի: Տըրանք գյիդաս ըն, թա դերը տանան առանց
կըլոխ ա տոնս եկալ:

Քյիս ըն դերըկընդանան հըրցընես. — Ա՛ դըրալեն, դերը վեր
տանան տոնս ա եկալ, կըլոխը յրան ա իլա՞լ, թա չէ՛:

Դըրակենըն ըսես ա. — Յըես գյիդաս չըմ կըլոխը յրան ա իլալ
թա չէ, մինակ փրոթուշ օտելիս տեղը մըրոքը տըմրտըմըացալ ա:
Ետնան վեր տըսնաս ըն դերը առանց կլխե մըռնիս ա, տընես
ըն թըղես:

Հաթերքըմը թոխալ օրեր շատ ա ինիս: Գյիդաս ըն, թա էտ
արտերեն վնաս կտա: Ժողովուրթեն հըվըքես ըն, ամմեն մինը մին
պեն ա յոր ունես, վեր քյինին սարեն յըրա վըննը կացած թուխպեն
թըկելալ ետ տան: էտ կուճի դերը մին ծակ մաս ա յոր օնես, քյիս:
Ժողովուրթը գյիդաս ա, թա վեր մասը ծակ ըլած չի ինի, թոխպը
ետ կըտեռնա: Գյիդաս ըն, թա թոխպը լոխ էտ ծակավըն ա եկալ:
էտ կուճի գերին էլ ըն սպընես:

Մըհենգյ ոնրանց կյիժոթունան էտ իրեք դերին էլ կուտուրես ըն:

Դե ետնան տըսնաս ըն, վեր ոնրանց վարած արտերը վեչ մին
պեն չի տըվալ, էնքան կոխ ըն տըվալ, վըննատակ ըրալ, ըսես ըն.
— Դե մըեր բախտն էլ իստի յա իլի՛, ճարտարը հացալ լիգյը, Գի-
շին կյինալ լիգյը, մունք էլ իստի ծըռքըռնես տեռտակ, դադարգյոն:

